ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2016թ. N -------Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 2-րդ կետի «հավելված» բառը փոխարինել «N1 հավելված» բառերով,

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին կետով.

«2.1. Հաստատել Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն ստանալու դիմումի և թույլտվության ձևը՝ համաձայն N2 հավելվածի:»

3) Որոշման N1 հավելվածի (այսուհետև՝ Հավելված) 11-րդ կետում՝

ա. «իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը,» բառերից հետո լրացնել «պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման համարը)» բառերը,

բ. «և կնիքը» բառերից հետո լրացնել «՝ կնիք ունենալու դեպքում» բառերը,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Դիմումը կարող է ներկայացվել համաձայն Որոշման N2 հավելվածով հաստատված ձևի:»:

4) Հավելվածի 12-րդ կետում՝

ա. «ա)» ենթակետից հանել «իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական գրանցման փաստաթղթերի պատճենները,» բառերը,

բ. «գ» ենթակետը «գովազդի չափերի նշումով» բառերից հետո լրացնել «, իսկ էլեկտրոնային էկրանի վրա գովազդ տեղադրելու դեպքում՝ էլեկտրոնային գովազդային նյութերը կրիչով» բառերը:»,

գ. «զ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «զ) հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր՝ դիմողի ցանկությամբ:»,

դ. լրացնել նոր «է» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«է) տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:»:

5) Հավելվածի 13-րդ կետում «հնգօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

6) Հավելվածի 14-րդ կետում «հնգօրյա ժամկետում» բառերը փոխարինել «դիմումը ստանալուց կամ թերությունները շտկելու համար սահմանված ժամկետի լրանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

7) Հավելվածի 15-րդ կետում՝

ա. «մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «դիմումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

բ. «առնվազն 3 աշխատանքային օր» բառերից առաջ լրացնել «Կանոնների 16-րդ կետով համաձայնեցման կամ մերժման համար նախատեսված ժամկետի ավարտից» բառերը.

8) Հավելվածի 16-րդ կետում «հնգօրյա ժամկետում» բառերը փոխարինել «դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «դիմումը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

9) Հավելվածի 17-րդ կետում «մերժում է համաձայնության տրամադրումը» բառերից հետո լրացնել «Կանոնների 16-րդ կետում սահմանված ժամկետում».

10) Հավելվածի 18-րդ կետում «երեք օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «տալը մերժում է նույն ժամկետում» բառերից հետո լրացնել «, ընդ որում թույլտվությունը տրվում է դիմումում նշված ժամկետով»:

11) Հավելվածի 19-րդ կետում «3-օրյա» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «հաստատված էսքիզի» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային նյութի» բառերով.

12) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 21.1. կետով՝

«21.1. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի դիմումը Կանոնների 16-րդ կետով սահմանված ժամկետում ենթակա է մերժման հետևյալ դեպքերում՝

ա. ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին,

բ. խախտվում են սույն կարգի և այլ իրավական ակտերի պահանջները,

13) Հավելվածի 22-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Այն կարող է մերժվել Կանոններով սահմանված ժամկետներում և հիմքերով:».

14) Հավելվածի 25-րդ կետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Համաձայնությունը տրվում է այդ մասին համապատասխան դիմում ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:».

15) Հավելվածի 26-րդ կետում՝

ա. «5-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «թույլտվության ժամկետը լրանալուց կամ վաղաժամկետ դադարեցվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

բ. «մեկ ամիս առաջ» բառերից առաջ լրացնել «թույլտվության ժամկետը լրանալուց» բառերը.

16) Հավելվածի 34-րդ կետում «4մx12մ» և «1.2մx1.8մ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «7մx14մ» և «1.5մx3.5մ» բառերով, իսկ վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Երևան քաղաքում տեղադրվող տեղեկատու դաշտով

գովազդային վահանակի կրող հենասյան վրա պետք է նշված լինի գովազդակրի անվանումը և հեռախոսահամարը:».

17) Հավելվածը լրացնել նոր 34.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«34.1 Երևանի քաղաքապետի կողմից սահմանված գործունեության ուղղվածության առանձին ոլորտների համար, գովազդային վահանակները պետք է լինեն միասնական գունային, ոճային ձևավորմամբ լուծումներով, որոնց էսքիզները հաստատում է Երևանի քաղաքապետը:».

18) Հավելվածի 35-րդ կետը հանել.

19) Հավելվածի 37-րդ կետի 3-րդ ենթակետի «30» թիվը փոխարինել «20» թվով, իսկ 4-րդ ենթակետում «15» թիվը փոխարինել «4» թվով.

20) Հավելվածի 45-րդ կետում «երկկողմանի կամ միակողմանի լուծում» բառերը փոխարինել «Երևանի քաղաքապետի կողմից հաստատված էսքիզներին համապատասխան միասնական գունայի, ոճային ձևավորմամբ լուծումներ» բառերով, իսկ «և չեն կարող զբաղեցնել 1քմ մակերեսից ավել տարածք» բառերը հանել.

2. Հաստատել Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն տրամադրելու դիմումի և թույլտվության ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
_____._____ .2016թ.
N_____-Ն որոշման

«Հավելված N2
Երևան քաղաքի ավագանու
2009 թվականի նոյեմբերի 18-ի
N37-Ն որոշման
Ձև 1

_____
(վարչական շրջանի անվանումը)
_____
(վարչական շրջանի ղեկավարի անուն, ազգանունը)
_____
(դիմողի անուն, ազգանուն/անվանում)
_____
(բնակության վայր/գտնվելու վայր,
պետական գրանցման համար)

Դիմում
Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդ տեղադրելու (տեղաբաշխելու) թույլտվություն տրամադրելու մասին

Խնդրում եմ տրամադրել ստորև նշված պայմաններով արտաքին գովազդ տեղադրելու (տեղաբաշխելու) թույլտվություն:

Գովազդային միջոցի տեղադրման վայրը _____
Գովազդային միջոցի տեղադրման ժամկետը_____
Տեղադրվող Գովազդի միջոցը _____
Գովազդի տեսակը _____

Այդ նպատակով խնդրում եմ՝
□ տրամադրել հողամաս (եթե գովազդի միջոցը տեղադրվելու է հողամասի վրա)
□ տրամադրել Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի օգտագործման համաձայնություն (եթե Գովազդը, Գովազդի միջոցը տեղադրվելու է հենասյուների կամ այլ գույքի վրա):

Կից ներկայացնում եմ՝
1. դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
2. գովազդի միջոցի նախագիծը, այն կոնստրուկցիա, կառույց կամ տեխնիկական այլ միջոց լինելու դեպքում՝ համապատասխան փորձաքննության եզրակացությունը,
3. գովազդի գունավոր ուրվանկարը (էսքիզը) երկու օրինակից՝ գովազդի չափերի նշումով,
4. եթե դիմումը ներկայացվում է դիմողի լիազորված անձի կողմից, ապա օրենքով սահմանված կարգով լիազորագիր և լիազորված անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
5. տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Դիմող՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«---»----------թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ _____ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ)

Թ Ո Ւ Յ Լ Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ____

Տրվում է

_____
գովազդատուի անվանումը

_____
արտաքին գովազդի տեղաբաշխման
(տեղադրման) վայրը (տեղը)

_____
արտաքին գովազդ տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)

_____
գովազդի տեսակը

_____
գովազդային նյութի անվանումը

Գովազդի մակերեսը _____ քմ

Թույլտվության գործողության ժամկետը՝ «__»_____թ.

Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար՝ _____

«---»----------թ.

Կ.Տ.»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ներկայացվել է առաջարկություն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և վերը նշված գրասենյակի մասնագետների համատեղ քննարկման արդյունքում մշակվել է սույն որոշման նախագիծը, որով առավել հստակորեն սահմանվել են արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու դիմումի մերժման հիմքերը, որոշումը լրացվել է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար դիմումի և թույլտվության ձևերով, ինչպես նաև կրճատվել են գովազդի թույլտվություն ստանալու դիմումները քննարկելու ժամկետները:

Առաջարկվող փոփոխությունների արդյունքում առավել արդյունավետորեն կկարգավորվեն Երևան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղաբաշխելու հարաբերությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱ Ն ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱ Ն ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու կապակցությամբ Երևանի 2016 թվականի բնուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ